ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1955 Общественные науки

Ռ. Լալայբեկյան

1905 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳԾԱՄԱՍԵՐՈՒՄ

1905 թ. հոկտեմբերի սկզբներին Ռուսաստանում սկսված համառուսաստանյան քաղաքական գործադուլը պայքարի ոգեշնչող օրինակ տվեց Անդրկովկասի երկաթուղայիններին, բանվորներին ու գյուղացիներին։ Ինչպես Ռուսաստանի կենտրոնում, այնպես էլ Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունները այդ գործադուլին նախապատրաստվում էին 1905 թվականի ոեսոլյուցիոն պայքարի ընթացքում։ ՌՍԴԲՊ Կովկասյան միությունը, նրա կոմիտեները և կազմակերպությունները Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, Բորչալուում, Ալեքսանդրապոլում և այլ տեղերում հրապարակած պրոկլամացիաներով Անդրկովկասի բանվորներին ու երկաթուղայիններին՝ կոչ էին անում ընդհանուր քաղաքական գործադուլ հայտարարել և դուրս գալ զինված ապստամբության։ Բոլշևիկյան կազմակերպությունները բանվորական մասսաներին պարզաբանում էին երկաթուղայինների և բանվորների հոկտեմբերյան գործադուլի վիթխարի նշանակությունը ցարական միապետության դեմ ոեսոլյուցիոն պատերազմ սկսելու գործում։ «Հզոր հրսկան— համառուսաստանյան պրոլետարիատը նորից շարժվեց,— ասված է ՌՍԴԲ պարտիայի Կովկասյան միութենական կոմիտեի՝ հոկտեմբերին բաց թողնված պրոկլամացիայի մեջ։— Ամենուրեք գործադուլային լայն շարժումն ընդգրկել է Ռուսաստանը։ Ինչպես մոգական գավազանի շարժումով Ռուսաստանի ամբողջ անծայրածիր տարածության վրա կյանքը միանգամից կանգ է առել։ Հենց միայն Պետերբուրգում իր երկաթուղիներով՝ մեկ միլիոնից ավելի բանվոր գործադուլ են արել։ Մոսկվան— խաղաղ, անշարժ, Ռոմանովներին հավատարիմ հին մայրաքաղաքը— ամբողջովին բռնված է ոեսոլյուցիոն հրդեհով»[1]։ Այս պրոկլամացիայի մեջ ՌՍԴԲՊ Կովկասյան միութենական կոմիտեն Անդրկովկասի բանվորներին, երկաթուղայիններին ու գյուղացիներին կոչ էր անում հետևել Մոսկվայի և Պետերբուրգի պրոլետարիատի օրինակին և պայքարի դուրս գալ ընդդեմ ցարական միապետության, հանուն ժողովուրդների ազատության։ Ընդհանուր գործադուլի և զինված ապստամբության կոչ անող բազմաթիվ պրոկլամացիաներ բաց թողեցին Բաքվի, Բաթումի, Բորչալուի և Ալեքսանդրապոլի կազմակերպությունները։ ՌՍԴԲՊ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը սեպտեմբեր ամսին հրապարակած իր պրոկլամացիայի մեջ՝ մերկացնելով ցարական կառավարության քաղաքականությունը գրում էր. «Ցարական բաշիբոզուկները հրով ու սրով ճնշում են ապստամբված ժողովուրդին։ Թնդանոթների սրոտը, հրացանների ճարճատյունը, հեծեծանքն ու հառաչանքը լսվում են «Սուրբ Ռուսիայի» ամեն կողմերից... ժողովուրդը պատ-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 1, էջ 209։

բաստվում է դիմել վերջին դրոհին՝ ընդդեմ ինքնակալության դահին՝ հիմնահատակ անելու այն և նրա փլատակների վրա նոր շենք կառուցելու։ Պաշտպանեցեք, քաղաքացիներ, դուք ևս բանվոր դասակարգի ռևոլյուցիոն շարժումը։ Թող Նիկոլայ արյունոտը և նրա արբանյակներն իմանան, որ իրենց վախճանը մոտ է։ Երբ ամբողջ Ռուսաստանը ոտքի է կանգնած, խայտառակություն կլինի ձեռքերը ծալած հանգիստ նստել և ուրիշի ձեռքով հրդեհ հանգցնել»[1]։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները բացի պրոկլամացիաներից, բնակչության մեջ և զինվորական մասերում տարածում էին մարքսիզմի կլասիկների աշխատությունները և այլ կարգի ռևոլյուցիոն գրականություն։

1905 թ. հոկտեմբերյան գործադուլի նախօրյակին Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետի տեղակալը դատական պալատին ուղարկած իր զեկուցագրի մեջ հայտնում էր, որ Ալեքսանդրապոլի կայազորի զորամասերում և բնակչության մեջ կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերվել է «Բոլոր զինվորներին» պրոկլամացիայից՝ 23 օրինակ ռուսերեն, 17 օրինակ պրոկլամացիա՝ վրացերեն, որից 15-ը ուղղված է գյուղացիներին, 4 օրինակ հայերեն, որից 3-ը ուղղված է հայ ժողովրդին, 5 օրինակ բրոշյուր ռուսերեն, կոմս Տոլստոյի երկերից մի քանիսը, «Երկու Եվրոպա» գրքից երկու օրինակ ռուսերեն, «Ով պետք է հաղթի» բրոշյուրից երկու օրինակ ռուսերեն, «Պատրաստ եղիր» բրոշյուրից մեկ օրինակ ռուսերեն, «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը» գրքից մեկ օրինակ, «Իսկրա» թերթի 87, 88 համարները, «Բանվորների այբբենարան» գրքից չորս օրինակ, «Մեծ ռևոլյուցիա» գրքից չորս օրինակ, «Բանվորական գործը Ռուսաստանում» գրքից չորս օրինակ, «Գյուղացիների ծանր դրությունը» գրքից՝ երկու օրինակ, «Գյուղական բանվորը» գրքից երկու օրինակ, «Բանվորական օրը» գրքից՝ մեկ օրինակ[2]։

Հոկտեմբերի ընդհանուր գործադուլի նախապատրաստման ընթացքում բոլշևիկյան կազմակերպությունները մեծ նշանակություն էին տալիս երկաթուղայինների մեջ կատարվող աշխատանքին, որովհետև առանց երկաթուղայինների մասնակցության անհնարին է ընդհանուր գործադուլը։ «Եթե կանգ առնեն երկաթուղայինները,— գրում է Լենինը,— գործադուլը բոլոր տվյալներն ունի ընդհանուր դառնալու։ Եթե չհաջողվի գլուխ բերել երկաթուղիների լիակատար դադարեցումը — կարելի է դրեթե հաստատապես ասել, որ գործադուլը ընդհանուր չի լինի»[3]։

Հենց այդ հանգամանքը հաշվի առնելով ՌՍԴԲ պարտիայի Կովկասյան միութենական կոմիտեն և Թիֆլիսի կոմիտեն հետևողական աշխատանք էին կատարում Անդրկովկասյան երկաթուղու Թիֆլիսի արհեստանոցների և դեպոյի բանվորների մեջ։ Արհեստանոցների և դեպոյի բանվորները ներկայացնում էին Թիֆլիսի բանվորության ամենաառաջավոր ջոկատը։ Այդ ջոկատի պարտիական կազմակերպությունը աշխատանքի հիանալի օրինակ էր տալիս սոցիալ-դեմոկրատական մյուս կազմակերպություններին։ Նա գլխավոր արհեստանոցների, դեպոյի և երկաթուղու բան-

[1] Архив Армянского филиала ИМЭЛС, ф. 33, ед. хран. 169.
[2] Նույն տեղում։
[3] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հ. 11, էջ 136։

վոր ծառայողներին նախապատրաստում էր հոկտեմբերյան համառուսաստանյան քաղաքական գործադուլին, բանվորների համար կազմակերպում էր զեկուցումներ, զրույցներ, որոնց ընթացքում կազմակերպության ակտիվ անդամները բացատրում էին 1905 թ. հոկտեմբերին Ռուսաստանի կենտրոնում սկսված երկաթուղայինների գործադուլի նշնակությունը։

Անդրկովկասի երկաթուղու Թիֆլիսի գլխավոր արհեստանոցների և դեպոյի բանվոր-ծառայողների ակտիվությունը, նրանց այդ ժողովներում արտասանվող ճառերի քաղաքական բնույթը, լրջորեն անհանգստացնում են ինչպես կովկասյան փոխարքայությանը, այնպես էլ Անդրկովկասյան երկաթուղու ղեկավար շրջաններին։ Հոկտեմբերի 10-ին Անդրկովկասյան երկաթուղու վարչության պետը հատուկ գրությամբ երկաթուղու բոլոր գծամասերի ղեկավարներից պահանջում է տեղական ժանդարմական ջոկատների հետ համագործակցված՝ խանգարել և թույլ չտալ, որ երկաթուղային բանվորները հավաքվեն հավաքույթի կամ ժողովի՝ պահանջում է բանվորական կոլեկտիվներից հեռացնել սոցիալ-դեմոկրատական դաղափարներով տարված բանվորներին, հետևել, բռնել և դատական պատասխանատվության ենթարկել դրսից եկող ագիտատորներին, որոնք աշխատում են «...մոլորության մեջ գցել իրենց պարտականությունները կատարող բանվորներին ու ծառայողներին»։ Երկաթուղու վարչության պետը Թիֆլիսի գլխավոր արհեստանոցների, դեպոյի ղեկավարությանը և կայարանի ոստիկանապետին մեղադրում էր այն բանի համար, որ իբր նրանց անբավարար աշխատանքի հետևանքով սոցիալ-դեմոկրատները երկաթուղայինների մեջ տարածել են գոյություն ունեցող պետական կարգը տապալելու կոչ անող պրոկլամացիաներ և այլ գրականություն։ «Հենց վերջերս բանվորների աշխատանքի վայրում հայտնաբերվեց ընդհանուր գործադուլի և զինված ապստամբության կոչ անող 9 պրոկլամացիա ռուսերեն լեզվով, 5 պրոկլամացիա վրացերեն լեզվով և 2 պրոկլամացիա հայերեն լեզվով, որոնք տպագրված են տարբեր քաղաքներում»[1]։ Իրականում բոլշևիկյան պրոկլամացիաները բանվորների և երկաթուղայինների մեջ արագ կերպով տարածվում էին ոչ թե երկաթուղու գլխավոր արհեստանոցների, դեպոյի ղեկավարության ու ոստիկանության անբավարար աշխատանքի հետևանքով, այլ բոլշևիկյան կազմակերպությունների ճկուն ու լավ աշխատանքի շնորհիվ։ Միայն սեպտեմբերի սկզբից մինչև հոկտեմբերի առաջին կեսը ՌՍԴՐՊ Կովկասյան միութենական կոմիտեն և նրա տեղական կազմակերպությունները տպագրել և տարածել են բանվորներին, երկաթուղայիններին ու զինվորներին ուղղված 17 պրոկլամացիա՝ մի քանի հազար օրինակներով։ Այդ պրոկլամացիաների մեջ շարադրված էին ոչ միայն բանվոր դասակարգի պայքարի արմատական խնդիրները, այլև գործադուլավորների հիմնական պահանջները։

Երկաթուղայինների գործադուլը ավելի հաջող նախապատրաստելու համար բոլշևիկները որոշում են լայն կապեր հաստատել Անդրկովկասյան երկաթուղայինների Միության բյուրոյի հետ, որը բավական ազդեցություն ուներ երկաթուղայինների շրջանում։ Այդ բյուրոն կապված էր երկաթուղայինների համառուսաստանյան Միության ղեկավարության հետ, իր ներ-

[1] ЦГИА Груз. ССР, ф. 110, оп. 3, л. 207, л. 218.

կայացուցիչն էր ուղարկում երկաթուղայինների համառուսաստանյան Միության խորհրդակցություններին ու առանձին նիստերին։ Բյուրոն իր ներկայացուցիչների միջոցով Անդրկովկասի երկաթուղայինների մեջ մասսայականացնում էր երկաթուղայինների համառուսաստանյան գործադուլի մասին ստացված բյուլետենները, կոչերը և պրոկլամացիաները։

Անդրկովկասյան երկաթուղայինների Միության բյուրոն իր բաժանմունքներն ուներ Անդրկովկասյան երկաթուղու խոշոր կայարաններում, որոնք տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ միասին՝ երկաթուղայիններին նախապատրաստում էին ընդհանուր գործադուլի։

Բոլշևիկյան կազմակերպությունների կատարած հսկայական աշխատանքը երկաթուղայիններին ընդհուպ մոտեցրեց ընդհանուր գործադուլին։ Բանվորների գործադուլային տրամադրությունները հայտնի են դառնում նաև Անդրկովկասյան երկաթուղու գլխավոր արհեստանոցների և դեպոյի դեկավարությանը։

Հոկտեմբերի 13-ին շոգեքարշային ծառայության պետը Անդրկովկասյան երկաթուղու վարչության դեկավարությանը զեկուցում է գլխավոր արհեստանոցների բանվոր ծառայողների մեջ աճող հակակառավարական տրամադրությունների և գործադուլի «ուժեղ նախապատրաստության» մասին։ «Բանվորների անբավականությունը և գործադուլային տրամադրությունները երևում են նաև այն բանից, որ նրանք ոչ կոռեկտ և սպառնալից պատասխաններ են տալիս իրենց անմիջական պետերին։ Հավանական է, որ գործադուլը գլխավոր արհեստանոցներում սկսվի հոկտեմբերի 14-ին»[1]։ Հոկտեմբերի 14-ին երկաթուղայինների մեջ տարածվեց Անդրկովկասյան երկաթուղայինների միության բյուրոյի պրոկլամացիան, որի մեջ ասված է. «Ընկերներ, համբերության բաժակը լցվեց։ Երկաթուղայինների Համառուսաստանյան Միությունը համոզվելով, որ բանակցությունները բյուրոկրատիայի հետ ոչ մի արդյունք չեն տալիս, ընդհանուր գործադուլի կոչ արեց. ոստիկանական բյուրոկրատական ռեժիմի լծի տակ երկար ժամանակ խոշտանգված երկաթուղայինների բազմաքանակ բանակը հրճվանքով արձագանքեց այդ կոչին, գիտակցելով վերջապես, որ միայն եռանդուն պայքարի ճանապարհով կարող է հասնել մարդկային նորմալ պայմանների իրականացմանը։ Գործադուլին մինչև այժմ միացել են 21 երկաթուղիներ։ Գործադուլին միանում են ավելի ու ավելի մեծ թվով երկաթուղիներ, բորբոքվում են բոլոր կայծերը։ Գործադուլը ստիճանաբար մոտենում է մեզ»[2]։ Պրոկլամացիան կոչ էր անում Անդրկովկասյան երկաթուղու բոլոր բանվոր-ծառայողներին միանալ Ռուսաստանի երկաթուղայինների պայքարին, նրանց հետ կողք-կողքի մարտնչել հանուն մարդկային իրավունքների, հանուն քաղաքական ազատ կյանքի։

«Գիտակցեցեք վերջապես, որ վրա է հասնում վիթխարի նշանակություն ունեցող պատմական մոմենտը, — ասված է այդ պրոկլամացիայում, մեր ոտնահարված իրավունքների համար ակտիվ պայքարի ժամը և եթե բաց թողնենք այդ մոմենտը, ապա մենք երկար ժամանակ չենք կարող

[1] ЦГИА Груз. ССР, ф. 110, оп. 3, д. 101, л. 413.
[2] Архив армянского филиала ИМЭЛС, ф. 39, ед. хран. 24.

ստանալ ոչ միայն քաղաքացիական ազատություն, այլև չենք կարող անգամ ձեռք բերել գոյության թեկուզ փոքր ի շատե պայմաններ։ Թող ձեզնից յուրաքանչյուրը գիտակցի, որ այժմ ինչ գնով էլ լինի՝ մենք պետք է թողնենք աշխատանքը»[1]։ Արձագանքելով այդ կոչերին, հոկտեմբերի 14-ին երկրորդ կեսին աշխատանքը թողեցին Թիֆլիսի գլխավոր արհեստանոցների բանվորները, որոնց միացան դեպոյի երկաթուղայինները։ Գործադուլավորները՝ հավաքվելով ժողովի, որոշեցին ռուսական պրոլետարիատի մարտական շարքերում պայքարը շարունակել մինչև առաջադրված պահանջների կատարումը։

Գործադուլավոր բանվոր-ծառայողների վրա տնտեսական ճնշում գործադրելու նպատակով Անդրկովկասյան երկաթուղու վարչության պետի կարգադրությամբ փակեցին գլխավոր արհեստանոցները և գործադուլավոր բանվոր-ծառայողներին համարեցին աշխատանքից ազատված։ Այդ առթիվ տրված հրամանում ասված է. «Նկատի ունենալով, որ այսօր գլխավոր արհեստանոցների բանվորները ինքնակամ թողել են աշխատանքը, առաջարկում եմ կարգադրություն անել գլխավոր արհեստանոցները փակելու մասին, մինչև նոր կարգադրություն լինելը։ Այդ մասին հայտարարություններ փակցրեք արհեստանոցների աչքի ընկնող տեղերում։ Խնդրվում է՝ դրա հետ միասին՝ հաղորդում պատրաստել փոխարքայության գրասենյակի համար»[2]։

Այս հրամանը անմիջապես կատարվում է շոգեքարշային ծառայության պետի կողմից։ Նույն օրը գլխավոր արհեստանոցների պատերին փակցրվում է հետևյալ հայտարարությունը.

«Հայտնվում է գլխավոր արհեստանոցների բանվորներին ու վարպետներին, որ արհեսաանոցները փակվում են մինչև համապատասխան կարգադրություն լինելը»։ Գլխավոր արհեստանոցների գործադուլավորների պահանջով հոկտեմբերի 14-ին աշխատանքը թողեցին նաև երկաթուղու գլխավոր պահեստների և արտելների բանվորներն ու ծառայողները։ Այդ մասին գլխավոր արհեստանոցների ղեկավարությունը երկաթուղու վարչության պետին գրում է. «Հենց նոր գլխավոր պահեստների վարիչը ինձ հաղորդեց, որ նրա ծառայողները, և նրանց հետ արտելը թողել են աշխատանքը։ Պահեստների վարիչը պահեսաները պաշտպանելու համար խնդրում է զինվորական պահակներ նշանակել»[3]։ Նույն օրը աշխատանքը թողեցին, գործադուլավորներին միացան նաև Թիֆլիսի կայարանի սլաքավարները, գնացքներ կազմողները (составители поездов), շղթայակցողները (сцепщики), հեռագրի, հեռախոսի ծառայողները։

Երկաթուղայի ծառայության պետը հայտնում էր, որ գնացքների շարժումը պահպանելու համար ինքը օգտագործում է երկաթուղային գումարտակի զինվորներին, «... որոնց վրա նույնպես երկար ժամանակ հույս դնել չի կարելի»։ Թիֆլիսի երկաթուղայինների այս միասնական ելույթի հաջողությունը բացատրվում է նրանով, որ երկաթուղայինների մեջ բոլ-

---

[1] Архив армянского филиала ИМЭЛС, ф. 39, д. 10, л. 24.
[2] Газ. „Коммунист" (груз.), № 5, 1926.
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում։

շևիկները հակայական ազդեցություն ունեին։ Թիֆլիսի գլխավոր արհեստանոցները և դեպոն բոլշևիկների համար ռևոլյուցիոն աշխատանքի գլխավոր հենարաններ էին։ Հակառակ բոլշևիկների, որոնք ձգտում էին Անդրկովկասի ողջ պրոլետարիատին պայքարի հանել, մենշևիկները, դաշնակները, ֆեդերալիստները աշխատում էին ձախողել գործադուլը, այն համարելով անհաջող էքսպերիմենտ։ Նրանք գտնում էին, որ գործադուլը կարող է շարքից հանել բանվորական լավագույն կադրերին և դատարկել բանվորական դրամարկղները։ Կովկասի մենշևիկները, ըստ էության, պաշտպանում էին երկաթուղայիններին համառուսական Միության մեջ խցկված մենշևիկների և էսերների այն ֆետակար տեսակետը, թե Ռուսաստանի պրոլետարիատը դեռ չի հասունացել ընդհանուր քաղաքական գործադուլի համար։ Պրոլետարիատի պայքարի պրակտիկան, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում մերկացրեց այդ կարգի բոլոր օպորտունիստներին։ Թիֆլիսի երկաթուղայիններին հետևեցին Անդրկովկասյան երկաթուղու բոլոր կայարանների, դեպոների և արհեստանոցների բանվոր-ծառայողները։ 1905 թ. հոկտեմբերի 15-ին Բաթումի բոլշևիկյան կոմիտեի կոչով աշխատանքը թողեցին Բաթումի երկաթուղայինները և Նավահանգստի բանվորները։ Այդ օրը բեռնատար կայարանում կանգնած գնացքները, Նավահանգստում խարիսխ գցած նավերը մնացին առանց դատարկվելու։ Հոկտեմբերի 15-ին Բաթումի կայարանապետը սկսված գործադուլի մասին հետևյալ էր հեռագրում Անդրկովկասյան երկաթուղու վարչության պետին. «Հոկտեմբերի 15-ին Բաթումի մարդատար ու բեռնատար կայարանների և Նավահանգստի բոլոր բանվորները, բեռնակիրները, շղթայակցողները (сцепщики), հսկիչները, պլաքավարները, գնացքներ կազմողները... (составители поездов) թողել են աշխատանքը և դուրս գնացել կայարաններից»[1]։ Բաթումի գործադուլավորները՝ հավաքվելով ժողովի, պահանջում են վերացնել ռազմական դրությունը Ռուսաստանի և Անդրկովկասի բոլոր երկաթուղիներում, երկաթուղային կայարաններից և գծամասերից դուրս բերել զորքերը, վերջ տալ՝ իր քաղաքական իրավունքները պաշտպանող ժողովրդին ջախջախելու նպատակով կատարվող զորքերի տեղափոխությունները, ազատել քաղաքական հանցագործների համար բանտարկվածներին, աշխատանքի վերընդունել բոլոր նրանց, ովքեր հեռացել են աշխատանքից, վճարել լրիվ աշխատավարձ գործադուլ արված օրերի համար»[2]։

Հոկտեմբերի 15-ին գիշերվա ժամը 12-ին աշխատանքը թողեցին Սամարեգիի երկաթուղայինները և ներկայացրին մի շարք տնտեսական ու քաղաքական պահանջներ։ Այդ մասին՝ կայարանապետի հեռագրի մեջ կարդում ենք. «Գիշերվա ժամը 12-ից գնացքների շարժումը կանգ առավ։ Ընդհանուր գործադուլին միացել են բանվորներն ու ծառայողները։ Կայարանի ունեցվածքը պաշտպանելու համար կարգված են պահակներ»[3]։

Գործադուլավորներն իրենց համերաշխությունը հայտնեցին Ռուսաստանի և Անդրկովկասի երկաթուղայիններին։ Սամարեգի կայարանի բոլոր բանվոր-ծառայողները որոշեցին աշխատանքի չանցնել մինչև չվերացվի

[1] ԻՊԻԱ Груз. ССР, ф. 110, оп. 3, д. 311, л. 71.
[2] Նույն տեղում, էջ 213։
[3] Նույն տեղում, էջ 219։

ռազմական դրությունը բոլոր երկաթուղիներում, մինչև զորքերը գուրս չբերվեն երկաթուղիներից և իրենց ազատության համար պայքարող դյուղերից ու գավառներից։ Հոկտեմբերի 15 և 16-ին աշխատանքը թողեցին Փոթիի, Եվլախի, Բաքվի և Անդրկովկասի երկաթուղու համարյա բոլոր կայարանների բանվոր-ծառայողները, որի հետևանքով ամբողջ Անդրկովկասյան երկաթուղու գործադուլը դարձավ ընդհանուր քաղաքական գործադուլ։ Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր հրամանատարը փորձեց երկաթուղային զորամասերի միջոցով ապահովել երկաթուղու նորմալ աշխատանքը, բայց այդ բանը նրան չհաջողվեց, որովհետև երկաթուղայիններին փոխարինած զորքերը մի շարք տեղերում միացան գործադուլավորներին։ Թիֆլիսի գլխավոր արհեստանոցների ղեկավարը հոկտեմբերի 15-ին շոգեքարշային ծառայության պետին հայտնում էր, որ գլխավոր արհեստանոցներում աշխատող պահեստային զինվորները թողել են աշխատանքը։ Կառավարությունը ամբողջ անդրկովկասյան երկաթուղում հայտարարեց ռազմական դրություն, նոր զորամասերով ու կոզակային ջոկատներով ուժեղացրեց երկաթուղային կայարանների և գծերի պաշտպանությունը։ Ռեվոլյուցիայի դահիճ Գրյազնովը հոկտեմբերի 16-ին Թուքայիսի գեներալ Շիշկովսկուն հեռագրում է հետևյալը.

«Զորքերի գլխավոր հրամանատարը հրամայել է, որ սույն հրամանը ստացվելուց հետո՝ ստեղծվի ուժեղ պահպանություն երկաթուղագծի հետևյալ տեղամասերում՝ Սամտրեդի, Ռիոն, Փոթի և Բաթում, դրա համար այդ տեղամասերում կանգնած Տենգինյան գնդի երկու վաշտին և Նավագինյան գնդի մեկ դումարտակին որպես համալրում պետք է ուղարկել Թուքայիսի Կուրինյան գնդից 9 վաշտ։ Այդ վաշտերից յուրաքանչյուրը բաժանել հետևյալ կայարանների վրա՝ Սանջվախո, Նիգոտի, Լանդախտի, Նոթանների, Կորուլեթի, Զակվա ու Բաթումի, և կեսական վաշտ Ռիոն, Կոպիտնաուրի, Զումաաի և Սուպսի։ Երբ կուրինյան գնդի վաշտերը կզբաղեցնեն նշված վայրերը և իրենց վրա կվերցնեն այդ վայրերի գծերի և շենքերի պաշտպանությունը, նավագինցիներից երկու վաշտ տեղափոխել Ռիոն և Փոթի...»[1]։

Կոզակային զորամասերն Անդրկովկասյան երկաթուղու կայարաններում ու գծամասերում գնդակոծում էին խաղաղ բնակչությանը և երկաթուղայիններին։ Անդրկովկասյան երկաթուղու բոլոր կայարաններից ու գծամասերից հաղորդումներ էր ստացվում զորքի և գործադուլավորների միջև տեղի ունեցող արյունահեղ ընդհարումների մասին, խաղաղ բնակչության նկատմամբ դաժան դատաստան տեսնելու մասին։ Շորապանի կայարանի և մոտակա գյուղի բնակիչները Անդրկովկասի փոխարքային ուղղած իրենց բողոքի մեջ հայտնում են, որ ամենափոքր առիթով զորքը կրակ է բացում բնակելի շենքերի վրա և պատճառ դառնում մեծ թվով զոհերի։

«Երեկ երեկոյան ժամը 7-ին ատրճանակի երկու կրակոցից հետո, կայարանից 150 սաժեն հեռավորության վրա տեղավորված զինվորները սարսափելի կրակ բացեցին այն շենքերի վրա, որտեղ ապրում են երկաթուղայինները և մասնավոր մարդիկ»։ Բողոքողները պահանջում էին, որ այդ

[1] Газ. „Коммунист" (груз.), № 5, 1926 г.
[2] Նույն տեղում, 1926։

դորամասը հետ կանչվի, իսկ մեզավորները ենթարկվեն պատասխանատվության։ Նույնպիսի արյունահեղ ընդհարումներ տեղի ունեցան Բաթումում, Սամարեգիում, Նոթանեբիում, Ստանահինում, Ղարսում և Ալեքսանդրապոլում Բաքվում, Եվլախում և բազմաթիվ այլ կայարաններում և կայարանամերձ վայրերում։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավարությամբ գումարված բազմի միտինգներում գործադուլավորները և ընակչությունը պահանջում էին վերացնել ռազմական դրությունը երկաթուղիներում, երկաթուղային կայարաններից անհապաղ հեռացնել կոզակային զորամասերը, դատական պատասխանատվության ենթարկել ոստանությունների և արյունահեղությունների կազմակերպիչներին։

Կառավարական օրգանների և զորքի գաժանությունները չէին ընկճում գործադուլավորների կամքը։ Նրանք շարունակում էին իրենց պայքարը, հարձակվում էին գնացքների վրա, կազմակերպում էին զինվորական գնացքների խորտակում և այլն։

Հոկտեմբերի 14-ին Թիֆլիսի գլխավոր արհեստանոցի գնդի բանվորների ու երկաթուղայինների գործադուլի ժամանակ ստեղծվեց Թիֆլիսի գործադուլային կոմիտեն, որի կազմում ընտրվեցին 26 հոգի։

Այդ կոմիտեն, որի կազմում կային բավական թվով բոլշևիկներ, գարձավ գործադուլավորների պայքարի ղեկավարման կենտրոն։ Նա էր ցուցումներ տալիս Անդրկովկասյան երկաթուղու մյուս գծամասերում ստեղծված գործադուլային կոմիտեներին։

Գործադուլային կոմիտեները մշակում էին գործադուլավորների պահանջները, կազմակերպում էին գործադուլավորներին օգնելու գործը։

Գործադուլային կոմիտեները, լինելով անպարտիական կազմակերպություններ, փաստորեն գործում էին սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ։ Նրանք իրենց կոչերում ու պրոկլամացիաներում առաջ էին քաշում և պաշտպանում այն բոլոր արմատական հարցերը, որոնք առաջ էին քաշվում ԲՍԴԲՊ Կովկասյան միութենական կոմիտեի և նրա կազմակերպությունների պրոկլամացիաներում։ Հաճախ գործադուլային կոմիտեները սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ հանգես էին գալիս համատեղ կոչերով ու պրոկլամացիաներով։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, կենսագործելով լենինյան ցուցումները, աշխատում էին մանել այդ անպարտիական ընտրովի կազմակերպությունների մեջ և ուղղություն տալ նրանց աշխատանքներին, նրանց հեռու պահել օպորտունիստական պարտիաների ու հոսանքների ազդեցությունից։ Սկսած հոկտեմբերի 15-ից երկաթուղայինների գործադուլային կոմիտեները գարձան Անդրկովկասյան երկաթուղու փաստական տերը։ Հոկտեմբերի 15-ից Անդրկովկասյան երկաթուղու բոլոր հիմնական ուղղություններում կանգ առավ գնացքների երթևեկությունը։ Երկրամասում մեռավ անտեսական նորմալ կյանքը։ Գործադուլային կոմիտեների կարգադրությամբ աշխատում էին միայն, այսպես կոչված, «գիլիգատական գնացքները», որոնց նպատակն էր պահպանել կենդանի կապը ամբողջ գծի գործադուլային օրգանների միջև և ապահովել գործադուլավորների անհրաժեշտ պահանջների կատարումը։ Երկաթուղայինների տեղական իշխանությունները և ժանդարմական զո-

կատները մեկուսացել և մի կողմ էին քաշվել, չէին էլ փորձում խառնվել և միջամտել գործադուլային կոմիտեների գործունեությանը։

1905 թ. հոկտեմբերի 16-ին Անդրկովկասյան երկաթուղու ժանդարմական վարչության պետը Անդրկովկասի փոխարքայությանն ոստիկանապետին զեկուցում էր, որ երկաթուղու բոլոր հիմնական կայարաններում տեր ու տիրական են դարձել «...սոցիալ-դեմոկրատների զեկավարությամբ ստեղծված «գործադուլային բյուրոներրդ, գծերի վրա աշխատում են միայն նրանց սպասարկող «դելեգատական գնացքներրդ, տեղական ժանդարմական ջոկատները անգործության են մատնվել, իսկ ադմինիստրացիաները դարձել են խաղալիք նրանց ձեռքին, և հաճախ նրա հպատակ՝ կատարում են նրանց կարգադրությունները[1]։ Ժանդարմական վարչության պետը անհրաժեշտ էր համարում հարց հարուցել օկրուգի հրամանատարության առաջ, ավելացնելու զորամասերի և կոզակների թիվը երկաթուղային կայարաններում և գծերում։

* * *

Անդրկովկասի երկաթուղայիններին միացան Հայաստանի երկաթուղայինները։ Հոկտեմբերի 15-ին, օրվա երկրորդ կեսին տեղական բոլշևիկյան կազմակերպության զեկավարությամբ աշխատանքը թողեցին Սանահին երկաթուղային կայարանի և դեպոյի բանվոր-ծառայողները, հոկտեմբերի 16-ին Սանահինի երկաթուղայիններին միացան Ախթալա, Այրում, Հաղպատ, Ղոլագերան և Շահալի կայարանների և կիսակայարանների երկաթուղայինները։ Հոկտեմբերի 16-ին Սանահինի կայարանապետ Անդրկովկասի երկաթուղու գծային ծառայության պետին զեկուցում էր. «Այսօր գործադուլի մեջ մտան մեքենավարները, սրաքավարները, շղթայակցողները և դեպոյի բանվորները։ Նրանք հրաժարվեցին ադմինիստրացիայի կարգադրությունները կատարելուցդ[2]։ Նույն զեկուցման մեջ կայարանապետը հայտնում էր, որ «Ծայրահեղ պարտիաները, դառնալով դրության փաստական տերը, ապատ կերպով կազմակերպում են միտինգներ, ցույցեր, որտեղ արտասանում են հակակառավարական ճառերդ։

Այդ գործադուլի ընթացքում հսկայական աշխատանք կատարեցին բոլշևիկյան կազմակերպությունները. նրանք փաստորեն իրենց ձեռքը վերցրին կայարանները և ողջ գիծը։ Գործադուլի առաջին օրը Սանահինում ստեղծվեց գործադուլային կոմիտե, որի կազմում ընտրվեցին նաև մյուս կայարանների ներկայացուցիչները։ Այդ ներկայացուցիչների միջոցով Սանահինի գործադուլային կոմիտեն ուղղություն էր տալիս գործադուլավորներին։ Անդրկովկասյան երկաթուղու ծառայության պետը փոխարքայության դրասենյակին ուղարկած իր զեկուցագրի մեջ պատմում էր, որ Սանահին կայարանում են կենտրոնացել գործադուլը զեկավարող «... ծայրահեղ պարտիաների բոլոր ներկայացուցիչները, որոնք գործողության ծրագիր են թելադրում Բորչալուից մինչև Լարաքիլիսա՝ գծի բոլոր երկաթու-

[1] ЦГИА Груз. ССР, ф. 340 с. оп. 9, д. 129, л. 177.
[2] Նույն տեղում, д. 610, л. 107։
[3] Նույն տեղում։

գայիններին։ Նրանք սպառնում են այն բանվոր ծառայողներին, որոնք փորձում են չկատարել իրենց տված անօրինական կարգադրությունները»։ Գործադուլային կոմիտեն և պարտիական կազմակերպությունը որոշում են պահանջել աշխատանքից ազատել կայարանապետ Մաքսիմովսկուն, որն աչքի էր ընկել բանվորների ու ծառայողների նկատմամբ ցուցաբերած իր դաժանությամբ։ Նրանք դիմում են Անդրկովկասյան երկաթուղու վարչության ու Երկաթուղայինների միության կովկասյան բյուրոյին՝ հաստատել իրենց որոշումը։

Հոկտեմբերի 15-ին՝ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության կոչով աշխատանքը թողնում են Ալեքսանդրապոլի դեպոյի երկաթուղու բանվոր-ծառայողները, Երևանի, Ուլուխանլուի, Ղարսի կայարանների ու արհեստանոցների երկաթուղայինները։ Այդ կոչում ասված է.

«Ընկերներ,

Մենք, Ալեքսանդրապոլի կայարանի և դեպոյի բանվորներս, միանալով Ռուսաստանի երկաթուղայինների ընդհանուր գործադուլին հայտնում ենք, որ ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր որոշումը՝ աշխատանքը չվերսկսել մինչև չբավարարվեն ներքոհիշյալ պահանջները, որոնք հանդիսանում են Ռուսաստանում ապրող ժողովուրդների բարեկեցության երաշխիքը»[2]։

Այդ պրոկլամացիայի մեջ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը գործադուլավորների համար առաջարկում է հետևյալ պահանջները.

1. Հիմնադիր ժողովի հրավիրում, որն ընտրված լինի ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ։ «Այդ ժողովն անհրաժեշտ է ամբողջ ժողովրդին նրա համար, որպեսզի բոլոր օրենքները համապատասխանեն ժողովրդի իսկական կարիքներին և որպեսզի օրենքները կազմեն ոչ թե ազնվականներն ու գործարանատերերը, այլ ամբողջ ժողովուրդը»[3]։

2. Ընտրական իրավունք տալ քսան տարեկանի հասած երկսեռ բոլոր քաղաքացիներին։

3. Անհապաղ ազատել քաղաքական և կրոնական համոզմունքների համար բոլոր բանտարկվածներին, նրանց, որոնք պաշտպանում են ժողովրդի իսկական շահերը։

4. Բոլոր ազգերի ու ռասաների իրավահավասարություն օրենքի առաջ։

5. Խոսքի, մամուլի, ժողովների, միությունների և դավանանքի ազատություն։

6. Մահապատժի վերացում։

7. Մշտական բանակի վերացում և նրա փոխարեն ժողովրդական միլիցիայի ստեղծում, պետության պաշտպանության հանձնումը ամբողջ ժողովրդին։

8. Ամբողջ բնակչության համար ձրի պարտադիր ուսուցում։

9. Ռազմական դրության, ուժեղացված պահպանության և էկզեկուցիաների վերացում ամբողջ Ռուսաստանում։

---

[1] ЦГИА ГрузССР, ф. 23 с. д. 510, л. 201.

[2] Архив Армянского филиала ИМЭЛС, ф. 39, д. 10, л. 24.

[3] Նույն տեղում, ֆ. 39, գ. 10, թ. 24։

10. Անձնագրային սիստեմի վերացում։

11. Ութժամյա աշխատանքային օր, իսկ մեքենավարների, կոնդուկտորների և նրանց նման ծառայողների համար սահմանել շաբաթական մաքսիմալ ժամերի քանակը։

12. Ամսական որոշակի աշխատավարձի սահմանում։

13. Երեկոյան աշխատանքների վերացում, պահպանելով աշխատավարձի չափը։

14. Ծերերի և հաշմանդամների ապրելու համար անհրաժեշտ պայմանների ապահովում։

15. Բոլոր ծառայողների համար սահմանված աշխատավարձը չպետք է փոփոխվի վարչության քմահաճույքով։ Աշխատավարձի մեջ փոփոխություններ կարող են կատարվել միայն բանվորների և ծառայողների կողմից ընտրված ներկայացուցիչների մասնակցությամբ[1]։

Այս պահանջները հիմնականում բխում էին ՌՍԴԲՊ ծրագրի մինիմում մասից և համարյա համընկնում են այն պահանջներին, որոնք առաջադրել էին Ռուսաստանի և Անդրկովկասի երկաթուղայինները և ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատը։ Ալեքսանդրապոլի երկաթուղայիններին միացան քաղաքի ձեռնարկությունների բանվորները։ Հոկտեմբերի 16-ին Ալեքսանդրապոլի կայարանապետը Անդրկովկասյան երկաթուղու վարչությանը ուղարկած իր զեկուցագրի մեջ հայտնում էր, որ հոկտեմբերի 15-ից Հայաստանի երկաթուղու «Ալեքսանդրապոլ—Ղարս, Ալեքսանդրապոլ—Երևան տեղամասը իր իշխանության տակ է վերցրել սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի գործադիր կոմիտեն»։ Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեն, որն ստեղծվեց հոկտեմբերի 15-ին՝ գործադուլի հենց առաջին օրը, իր ներկայացուցիչներն ուներ Երևանի, Ուլուխանլուի կայարաններում, որոնք պայքարում էին գործադուլային կոմիտեի որոշումները այդ կայարաններում կենսագործելու համար։ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության և գործադուլային կոմիտեի ղեկավարությամբ քաղաքում կազմակերպվում էին ժողովներ, միտինգներ, ցույցեր, որտեղ քննարկվում էին բանվորների ու աշխատավորների համար անհետաձգելի խնդիրներ, ընդունում էին կարևոր որոշումներ, գործադուլավորներին օգնելու, բանվորական զինված ջոկատներ ստեղծելու, և այլ բազմաթիվ հարցերի մասին։ Կառավարությունը երկաթուղային զորամասերով և պատժիչ ջոկատներով ուժեղացրեց երկաթուղագծերի պաշտպանությունը, փորձեց երկաթուղային զորամասերի օգնությամբ սարքել փչացած գծերը և վերականգնել շարժումը։ Բայց երկաթուղայիններից և մոտակա գյուղերի գյուղացիներից կազմված զինված ջոկատները շարունակում էին իրենց պայքարը։ Նրանք հարձակումներ էին գործում գծերը պաշտպանող զինված ուժերի վրա, որոշ տեղերում հանում էին գծերը, ժայռեր էին փլցնում գծերի վրա, կազմակերպում էին գնացքների խորտակում, բաց էին թողնում շոգեքարշերի մեջ եղած գոլորշին, շուռ էին տալիս ապրանքատար վագոնները, կանգառներում առանձին վագոններ անջատում էին գնացքից և այլն։ Հոկտեմբերին այդ ջոկատները կազմակերպեցին 134-րդ գնացքի խորտակումը, որի հետևանքով սպանվեցին 15-ից ավելի զինվորներ։ Գծի քանդման

[1] Архив Армянского филиала ИМЭЛС, ф. 39, д. 10, л. 24—25.

հետևանքով երկրորդ գնացքը խորտակվում է Սանահինից ոչ հեռու։ Խորտակված գնացքներից մեկը նշանակված էր Ղարսի համար, մյուսը Ալեքսանդրապոլի։ Երկու գնացքներն էլ զորքեր էին փոխադրում։ Այսպիսի հարձակումներ էին կատարվում Ալեքսանդրապոլ—Ղարս, Ալեքսանդրապոլ—Երևան գծերում։ Հոկտեմբերի 23-ին Երևանի կայարանապետը իր զեկուցագրի մեջ հայտնում էր, որ Ուլուխանլու կայարանում «անհայտ չարագործները փչացրել են երկու շոգեքարշ». Ուլուխանլու—Ալեքսանդրապոլ գծի վրա խորտակվել է մի գնացք, որի հետևանքով զոհվել են 27 մարդ։ Հոկտեմբերի 22-ին Ղարսի կայարանում տեղի ունեցան արյունահեղ ընդհարումներ երկաթուղայիններին և ոստիկանության միջև։ Երկաթուղայինները հրաժարվում էին Ալեքսանդրապոլի համար նշանակված գնացքը բաց թողնել, բայց զինված ուժի պաշտպանությամբ գնացքը դուրս եկավ Ղարսից։ Այդ գնացքը քաղաքից 53 վերստ հեռավորության վրա խորտակվեց, գիծը փչացած լինելու հետևանքով։

Այսպիսով, Անդրկովկասի երկաթուղայինները արձագանքելով համառուսաստանյան հոկտեմբերյան գործադուլին, հերոսական պայքարով իրենց պատվավոր տեղը գրավեցին երկաթուղայինների համառուսական պայքարի պատմության մեջ։